



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 5 - Ա
22 հունվարի 2015 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77.1 և 77.2 հոդվածների, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ, 1.37-րդ, 1.38-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2014 թվականի դեկտեմբերի 27-ի N 282-Ա հրամանը

որոշում եմ՝

1. Հաստատել 2015 թվականին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում իրականացվելիք վարչական հսկողության բնագավառը և վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային խմբին՝

1) վարչական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի փետրվարի 10-ի N 01/15/577-14 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված

Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարով.

2) անհրաժեշտության դեպքում վարչական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների.

3) մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):

3. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ յուրաքանչյուր համայնքում վարչական հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:

4. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլիաթյանին՝ յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և առտակարգ իրավիճակների նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված վարչական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
 ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
 2015թ. հունվարի 22 - ի
 N 5 - Ա որոշման

**2015 ԹՎԱԿԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
 ԲՆԱԳԱՎԱՌԸ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ**

h/h	ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ	ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐ	
		ԻՎԱՆ ԱՍԱՏՐՅԱՆ մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ, խմբի ղեկավար	
1	ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ	ԽԱԶԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ	
2	ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ	ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ	
3	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ	ԴՎՈՅԱՆ ՍԵՎԱԿ մարզպետարանի աշխատակազմի ԱՍԱ վարչության պետի տեղակալ	
4	ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ	ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՄԱՐԱՏ մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչի տեղակալ	
5	ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ	ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի վարիչ	

6	ԱՆԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ, ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ԵՎ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ	ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՇՈՏ մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի վարիչ	
7	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ	ԽԱԶԱՏՐՅԱՆ ՍՈՒՐԻԿ մարզպետարանի աշխատակազմի ԱՍԱ վարչության սոցիալական ապահովության բաժնի վարիչ	
8	ՔԱՂԱՔԱՅԻՎԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ	ՂԱԶԱՐՅԱՆ ՆՈՐԻԿ իրավաբանական բաժնի վարիչ	
9	ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ	ՕՀԱՆՅԱՆ ՀՐԱՆԴԻԿ մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՀԳՄՀ բաժնի վարիչ	
10	ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ	ՍԱՖԱՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ մարզպետարանի աշխատակազմի ԿՄՍ վարչության կրթության բաժնի վարիչ	
11	ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ	ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի վարիչ	
12	ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ	ՕՀԱՆՅԱՆ ՀՐԱՆԴԻԿ մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՀԳՄՀ բաժնի վարիչ	
13	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ	ՕՀԱՆՅԱՆ ՀՐԱՆԴԻԿ մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՀԳՄՀ բաժնի վարիչ	
14	ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ	ԲՈՒԴՈՒՄՅԱՆ ԽԱԶԻԿ մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ	
15	ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ	ՕՀԱՆՅԱՆ ՀՐԱՆԴԻԿ մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՀԳՄՀ բաժնի վարիչ ՂԱԶԱՐՅԱՆ ԳՈՐ Ֆինանսատնտեսագիտական բաժնի վարիչ	



ԱՇԽԱՏԱԿԱՐԾ

Ս. ԽԱՂԱԹՅԱՆ